Հաստատում եմ
Հայաստանի պատմության թանգարանի
Տնօրեն Դ. Պողոսյան
24.06.2023թ.

ԿԱՐԾԻՔ

Մարիամ Սամվելի Շահմուրադյան

«Անապատի օդապարուկների»

Կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը

Վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին

Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության և դրամագիտության բաժնի 2023թ հունիսի 24-ի ընդլայնված նիստում քննարկվեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ Մարիամ Սամվելի Շահմուրադյանի՝ «Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը վերնագրով ատենախոսական աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ:

Նիստին մասնակցում էին թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Ն. Երանյանը, հնագիտության և դրամագիտության բաժնի վարիչ Ա. Պողոսյանը, հնագիտության բաժնի գիտաշխատողներ՝ Լ. Խաչատրյանը, պ.գ.թ. Ա. Զոհրաբյանը, պ.գ.թ. Բ. Վարդանյանը, Հ. Աբրահամյանը, Ա. Ադիգյոզալյանը, Դ. Գրիգորյանը, ինչպես նաև պ.գ.թ. Ռ. Վարդանյանը և պ.գ.թ. Հ. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցան Լ. Խաչատրյանը և Բ. Վարդանյանը:

Նիստի մասնակիցները արձանագրեցին հետևյալը.

Ատենախոսությունը նվիրված է Առաջավոր և Միջին Ասիայում (Հայաստան, Իրաք, Թուրքիայ, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Սաուդյան Արաբիա, Ղազախստան, Ուզբեկստան և Թուրքմենստան) հայտնաբերված հսկայական չափեր ունեցող հուշարձանների այն տեսակին, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են «Անապատի օդապարուկներ» անվամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխանաբար տասը, չորս, հինգ, հինգ, չորս ենթագլուխներ պարունակող հինգ գլուխներից և եզրակացությունից: Այն ունի գրականության ցանկ և երկու հավելվածներ՝ քարտեզների, աղյուսակների, դիագրամների և նկարների ու գծանկարների, ինչպես նաև Հայաստանի օդապարուկների պատկերաշարի:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, որում մասնավորապես նշում է, որ չնայած այն հանգամանքին, որ Սիրիայում և Հորդանանում հետազոտվող օբյեկտները թվագրվում են Ք.ա. 9-8-րդ հազարամյակներով՝ կենսագործելով մինչև Ք.ա. 7-6-րդ հազ-ը, քննվող մյուս տարածքներում, այդ թվում Հայաստանում, այս կառույցների և՛ ժամանակագրությունը և գործառութային ոլորտի նախանշման համար տվյալները սուղ են, իսկ երբեմն՝ հակասական: Քննվող թեկնածուական ատենախոսության նպատակն է հեղինակի հրատարակված և դաշտային հետազոտությունների հիման վրա ներկայացնել վերը նշված տարածաշրջաններում օդապարուկների կառուցվածքային, գործառութային, հնագիտական համատեքստի և ժամանակագրության վերաբերյալ տվյալներ՝ առանցքում ունենալով Հայաստանի համապատասխան հուշարձանները:

Առաջին գլխում ատենախոսը քննության է առել օդապարուկների աշխարհագրությունը՝ ներկայացնելով քննվող հուշարձանների քանակային բաշխվածությունն ըստ հետազոտվող տարածաշրջանների: Վերլուծելով Հայաստանի օդապարուկների տարածվածությունը՝ հեղինակը մասնավորապես նշում է, որ դրանք սփռված են Արագածի հարավային և հարավարևմտյան լանջերին, որոնց գերակշռող մասը գտնվում է ծ.մ. 1000-1500 մ բարձրության վրա: Ըստ այդմ, հեղինակը պայմանականորեն առանձնացրել է Հայաստանում հանդիպող օդապարուկների յոթ խումբ՝ Արագածի արևմտյան, հարավարևմտյան, հարավային, Ախուրյան-Արաքսի, Ստորին Ախուրյանի արևելյան, Թալինի ջրանցքի և Արարատյան դաշտի արևմտյան:

Երկրորդ գլխում քննության են ենթարկվել օդապարուկների կառուցվածքն ու ձևերը: Մանրակրկիտ վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ այս շինություններն ունեն կառուցվածքային կանոնավոր տարրեր՝ զուգամիտվող քարաշարեր, մուտք, շրջապարիսպ, աշտարակ: Դրանք միավորվում են նաև լանդշաֆտային առանձնահատկություններով: Օդապարուկների բնութագրման համար հեղինակն առանձնացրել է կառուցվածքային չորս հիմնական տարրերի առկայություն՝ քարաշար, մուտք, շրջապարիսպ և աշտարակ:

Երրորդ գլխում հեղինակը քննության է ենթարկել օդապարուկների հնագիտական համատեքստը՝ հիմնվելով դաշտային հնագիտական աշխատանքների տվյալների վերլուծության վրա: Օդապարուկների հնագիտորեն ուսումնասիրության նպատակով պեղումներ են կատարվել Թլիկ և Արագածավան համայնքների վարչական տարածքներում գտնվող մի քանի հնավայրերում՝ Թլիկ-1 (օդապարուկ), Թլիկ-2 (բնակատեղի), Թլիկ-4 (բնակատեղի), Արագածավան-1 (օդապարուկ): Ըստ դաշտային և հնագիտական հետազոտության՝ օդապարուկների միջավայրում փաստագրվում են անիվ-կառույցներ, ագլոմերատիվ տներ, դամբարաններ, ժայռապատկերներ և այլ կառույցներ: Հեղինակն իրավամբ նշում է, որ օդապարուկների հնագիտական հետազոտության գլխավոր խոչընդոտներից

մեկն այն, որ այս կառույցների շրջապարիսպների մեջ մշակութային շերտեր չեն բացվում, իսկ աշտարակների մեջ դրանք հանդիպում են հազվադեպ: Բուն օդապարուկների տարածքում փաստագրվում են ժամանակագրական լայն ընդգրկում ունեցող (քարի դարից մինչև ազգագրական անցյալ) տարբեր նշանակության կառույցներ և արտեփաստեր: Ըստ Հայաստանի օդապարուկների միջավայրում պեղված համալիրների փաստագրված հնագիտական իրադրության դրանք վերաբերվում են բրոնզի դարաշրջանի միջին շրջափուլի Թռեղք-վանաձորյան մշակույթին (Արագածավան-1, Թլիկ-4), ուշ շրջափուլին (Արտենի-1) և մեկը՝ երկաթի դարին (Թլիկ-2):

Չորրորդ գլխում հեղինակը քննության է առնում օդապարուկների թվագրության և ժամանակագրության խնդիրները՝ նշելով, որ դրանցից հնագույնները գտնվում են Հորդանանում և վերաբերվում են վաղ նոր քարի դարին: Օդապարուկների մի մասն ուշ նոր քարի դարում արդեն չի օգտագործվել: Հայաստանի օդապարուկներից ստացված ռադիոմետրիկ տվյալները վկայում են, որ դրանք կառուցվել են ավելի վաղ քան ուշ բրոնզի դարը (օր.՝ Քարակերտ-10-ը), իսկ երկուսն ավելի վաղ քան միջնադարը (Քարակերտ-5, 8-ը): Որոշ օդապարուկներ (օր.՝ Արագածավան-1-ը, Թլիկ-1-ը), օգտագործվել են թե՛ անտիկ, թե՛ միջնադարյան ժամանակաշրջաններում: Օդապարուկներից երկուսի միջավայրում գտնվող բնակավայրերը թվագրվում են միջին և ուշ բրոնզի, վաղ երկաթի դարերով:

Հինգերորդ գլխում հեղինակը քննության է ենթարկում օդապարուկների գործառույթի վերաբերյալ առկա տեսակետները: Հեղինակը ներկայացնում է հետազոտվող կառույցների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա բոլոր տեսակետները՝ կճղակավոր կենդանիների և վիթերի որսատեղի լինելը (ա), դրանց անասնապահական նշանակություն ունենալը (բ) և պաշտամունքային կառույցներ լինելու տեսակետը (գ): Հեղինակը, հիմվելով հնագիտական և ազգագրական գրականության տվյալների վրա, վերլուծում և քննության է ենթարկում տեսակետներից յուրաքանչյուրը: Հեղինակն այս գլխում հետազոտում է նաև Հեմմայի սարահարթի ժայռապատկերների այն խումբը, որտեղ պատկերված են օդապարուկներ և կենդանիներ՝ երբեմն որսի կամ դիցաբանական տեսարաններով:

Ատենախոսությունն ավարտվում է ամփոփիչ եզրակացությամբ, որում, մասնավորապես նշվում է, որ այս շինությունները հանդես են գալիս որոշակի երկրներում և աշխարհագրական միջավայրերում՝ Ուստյուրտի սարահարթ, Արագածի լանջեր, Ուրֆայի և Հեմմայի սարահարթ, Համլիրենայի լեռներ, Հարրաթ ալ Շաամ, Հարրաթ Խայբար, Ռահատ, Կուրա անապատներ: Ելնելով կառուցվածքային առանձնահատկություններից՝ հուշարձանների այս տեսակները խմբավորվում են ըստ հատկանիշների: Պեղումներով հայտնաբերված նյութական մնացորդների սակավության պատճառով, քննվող կառույցների ժամանակագրական և մշակութային պատկանելիության հարցերը դեռևս մասամբ են հետազոտված:

Հեղինակը նշում է, որ ըստ առկա տվյալների, Հայաստանում հնագիտորեն հետազոտված հուշարձանները թույլ են տալիս խոսել դրանց միջին և ուշ բրոնզի դարերով ժամանակագրվելու հավանականության մասին, որոնք երկրորդային կերպով օգտագործվել են նաև միջնադարում:

Հեղինակը նշում է նաև, որ փոքրածավալ պեղումների և գտածոների սակավության պատճառով քննվող հուշարձանների գործառույթը մնում է չպարզաբանված, չնայած տիրապետող են դրանց որոգայթ լինելու կամ անասնապահության համար նախատեսված կառույցներ լինելու տեսակետները: Հրապարակում առկա է նաև դրանց պաշտամունքային նպատակներով օգտագործված լինելու վերաբերյալ տեսակետ:

Թեկնածուական ատենախոսությունը գրված է գրական հայերենով՝ պահպանելով լեզվի գիտական ոճը: Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը ծանոթ է և օգտագործել է հետազոտվող խնդրին վերաբերվող օտարալեզու հիմնական գրականությանը:

Գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և արդյունավետ աշխատանքը՝ կցանկանայինք նրա ուշադրությունը հրավիրել մի քանի հարցերի վրա.

1. Արագածի լանջերին օդապարուկների կուտակումները, որոնք հեղինակի կողմից պայմանականորեն խմբերով առանձնացված են, կարևոր խմբավորող հատկանիշ պետք է լինեին նաև փոքր սեզոնային գետակները, որոնց հուներին էլ տեղադրված են օդապարուկները և բնակավայրերը:
2. Ըստ օդապարուկների հնագիտական համատեքստի և կառուցվածքային արտաքին հատկանիշների քննության, առանձնահատուկ տեղ պետք է զբաղեցնի համաժամանակյա այլ հուշարձանների շինտեխնիկայի կամ օդապարուկների առանձին տարրերի համեմատական քննությունը: Մասնավորապես, օդապարուկների շրջապարիսպների կամ աշտարակների շինտեխնիկան ակնհայտ նմանություններ է ցուցաբերում Արագածի բարձրլեռնային գոտիներում հայտնի և հետազոտված «կիկլոպյան» ամրոցների շինտեխնիկայի հետ, իսկ որոշ օդապարուկների աշտարակների շարվածքներ հիշեցնում են միջինբրոնզեդարյան դամբանային ճարտարապետության տարրերը: Ուստի, դրանց համեմատական քննությունը նույնպես հետագայում կարող է օգնել օդապարուկների ժամանակագրության և թվագրության հարցերում:
3. Հայտնի է, որ Կուրարաքսյան միջագետքում միջին բրոնզի դարի թռեղքվանաձորյան շրջափուլում սկսվում են հասարակության բարդման և արմատական շերտավորման գործընթացներ, որոնքը հնագիտորեն դրսևորում են դամբանաբլուրներում կատարված թաղումները ուղեկցող հարուստ գույքով և համալիրներով, արտաքին աշխարհի հետ ունեցած առևտրատնտեսական և փոխանակային հարաբերություններով և ներկրված պերճանքի և այլ առարկաների ի հայտ գալով: Վաղ բրոնզի դարի

Կուրարաքսյան մշակույթի անկումից հետո ձևավորված տնտեսաձևը բազմաթիվ մասնագետներ բնորոշել են որպես *շարժուն անասնապահություն*, որի հիմքում մանր եղջերավոր անասունների բուծումն էր: Միջինբրոնզեդարյան տնտեսական հզորության գլխավոր ցուցանիշն անգամ, ըստ Փոքր Ասիայում ասորեստանյան առևտրային գաղութների (*կարում, վաբարտում*) գրավոր տվյալների (կապադովիկական սալիկներ), բրդի առևտուրն էր:

Այն, որ Հայաստանի մի շարք օդապարուկների միջավայրում փաստագրվել են միջինբրոնզեդարյան բնակատեղիներ՝ գունազարդ խեցեղենով և դասական այլ նմուշներով, իսկ կենդանաբանական մնացորդների հետազոտությունը մատնանշում է հոտում մանր եղջերավոր անասունների քանակային գերակշռություն, կարող է վկայել օդապարուկների շրջապատում բնակվող հասարակությունների անասնապահական սեզոնային բնույթի մասին: Ըստ այդմ, օդապարուկների՝ անասնապահության նպատակով օգտագործման հանգամանքն անհրաժեշտ է քննել այս տեսակետից ևս:

4. Հետագա հետազոտություններում հեղինակի ուշադրությունը կուզենայինք հրավիրել նաև օդապարուկների համատեքստում առկա դամբանաբլուրների՝ թաղման ծեսը բնութագրող հատկանիշների տարածաշրջանային համատեքստում դիտարկելու հարցը: Ինչպես նաև բնակատեղիներից հայտնաբերված կենդանական ոսկորների իզոտոպային հետազոտությունը, ինչը հնարավորություն կտա հետևելու միջինբրոնզեդարյան այս համայնքների տեղաշարժերին:

Նշված դիտարկումներն ամենևին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, որում տեղ գտած դրույթներն ու թեզերը հրատարակվել են աշխատության մեջ:

Հայաստանի պատմության թանգարանի Հնագիտության և դրամագիտության բաժինը գտնում է, որ Մարիամ Սամվելի Շահմուրադյանի *«Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը* վերնագրով ատենախոսական աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Այս աշխատությունը ցանկալի է տեսնել հրատարակված:

Հնագիտության և դրամագիտության բաժնի վարիչ՝ Ա. Ս. Պողոսյան

Գիտական գծով փոխտնօրեն՝ Ն. Երանյան